

ՄԵՐ ՕՐԵՐԸ

ՌՌԻՍԱԿԱՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ

Գրեց՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՏԱՄՆ տարի է, ինչ սովետական մղձաւան- ջը կարմիր ու թանձր մտախտուղով պատել է Ռուսիոյ հորիզոնը: Սլաւո-մոնղոլական լայ- նածաւալ ստեպլերն ապրում են աննախընթաց մի երկունք եւ իրենց հետ հեւ ի հեւ են պա- հում համայն տիեզերքը:

Ասես Յայտնութեան Նեոն է ծնուած՝ ու կատաղօրէն սլանում է ուսուսական հարթու- թիւնների վրայով խելայեղօրէն ահօսելով մայր երկրի կուրծքը սարսափ ցանելու հա- մար:

Վիթխարի այս երեւոյթը, որ ըստ իս մեր օրերի պատմական մեծագոյն փաստն է, դեռ երկար ժամանակ իր անակնկալ հետեւանքնե- րով պիտի ծանրանայ Ռուսիոյ եւ առհասա- րակ աշխարհի բախտի վրայ: Բուլշեւիզմը սո- վորական բմբուռումով յեղափոխութիւն չէ, այլ մի անհնարին կատակիլով է, որ ճգնում է հիմն ի վեր դարձնել մարդկութեան համայն պատմութիւնը յեղաշրջելով, տակնուվրայ ա- նելով համայնական թէ անհատական, ազգա- յին թէ քաղաքական, հոգեւոր՝ թէ կրօնական քոլոր-արժէքները եւ նրանց փոխարինել բոլոր- րովին հակոտնեայ, յաճախ արտառոց, նոյն- իսկ հրէշաւոր բմբուռումներով, որոնք տարա- մերժօրէն բողբուում են մեր բարոյական կա- ուսուցումներն իրենց միանգամայն նախնական բնոյթով:

Եւ անչուչտ այս վերջին պարագան է պատճառը, որ բուլշեւիզմը յետամնաց արեւել- քում աւելի յաջողութիւն ունի, քան քաղաքա- կրթութեան բարձր ոլորտները թեւակոխած արեւմտեան երկրներում:

Յոգնած ու յորանջուն Ասիան կիսախուփ աչքերն ճմուռելով՝ նայում է դէպի կարմբաւուն հորիզոնները, ուր յեղյեղում են Լենինի պատ- դամները փոթորկայոյց ծովի պէս ալեկոծ:

Նայում է ու մնում երազուն. հեռաւոր

տեսիլքի պէս հարազատ վերյուշեր նրա հոգին են ալեկոծում: Ասիային չի հետաքրքրում դա- սակարգային պայքարը, պրոլետարիատի դիկ- տատուրան, կարմիր աւետարանի բարոյական եւ հասարակական գաղափարները, անհատի, ընտանիքի, համայնքի եւ պետութեան կեանքը դիկալարող օրէնքներն ու սեղբունքները:

Բուլշեւիկեան շարժումի մէջ Ասիան քա- ղում է իր նախասիրած արիւնն, աւերածն ու քսենօֆօրին, որ իր բմբուռումով իր ցեղային ազատագրութեան առաջին պայմանն է:

Ռուսիոյ նախճիրներն ու սարսափը, խուճապած ամբոխների անմիտ ու վայրագ դրոհը, միլիոնաւոր կեանքերի ոչնչացումը, արտ ու արօրի մահը, աշխատանքի, հոգու ու մտքի ստրկացումը, շղթաների շոինդը մեծ ճամբաներում, բանտերի տաք օդը մարմիննե- րի թաճրութիւնից, մարդու, անհատի փոշիա- ցումը դոզմաների ծանրութեան տակ, բոլոր- րը, բոլորը, ինչ այսօր սովեաները փոռւմ են աշխարհի առաջ՝ ասիական ժողովուրդներին ո՛չ զարհուրանք, այլ մի տեսակ կենսական գրգիւ է պատճառում դուրեկան ու մտերիմ: Ասիան հին բոնութիւնների ու արիւնի աշ- խարհն է:

Ու քնաւ զարմանալի չէ, որ հինաւուրց «Չին-մաւ-չին» ու «Հնդստան» մինչեւ Մի- ջին Ասիայի դեղին անապատների խաժամութե- ները, մինչեւ Թուրան ու Թաթարստան, մին- չեւ Միջերկրականի ափերին թառած Օսմանի հորդաների աւերիչ ժառանգորդները եռուղեւի մէջ են: Դարերով ընդարձացած միլիոնաւոր դրոխներ կարճ ու թանձր պարանոցների վը- րայ, մանրիկ ու առեղծուածային հայեացքով աչքերը ճպճպացնում են, հաստաչուրթն, փոքրիկ բերանների շուրջը դոհունակութեան ժպիտն է խաղում ի տես ուսուսական կարմիր ուրազանի:

Եւ անուրանալի է, որ խաւար Ասիոյ մէկ ծայրից միւսը ազատական մի կրքոտ շարժում